

մտեալ ի ներս տեսաք բազում շինուածս . եւ 145
 մտեալ ի խաչելութեան տեղն ժի՛ աստիճան
 ի խոնարհ . եւ էր որպէս թուրպայ կամարով .
 եւ դրսէն սներովք զարդարեալ . եւ դեռ այն
 երկու սիւնն կայր , որոյ վրայ խաչեցին զնա .
 զոր անկեալ ի վերայ երեսաց աղօթեցաք 150
 երկրպագութեամբ . եւ մեղաց թողութիւն
 խնդրեալ մեզ եւ մեր ծնողաց՝ զարձաք ի
 տուն :

Եւ այլ օրն եկաք ի վանքն Բարթողի-
 մէոսի առաքելոյ , եւ անդ աղօթեցաք եւ մե- 155
 ղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մերոցն .
 եւ ելաք ի սեղանն ուր կայր մասն սուրբ մար-
 մնոյն ի մէջ մէրմէրի սընտրկին , երկաթով
 պարապնտած . եւ գիշեր ու ցորեկ արծթէ
 կանթեղ կու վառէր ի վրայ : Եւ մերձ այս վա- 160
 նիցս՝ հուպ միմիանց չորս վանք կայր , մի
 քան զմի գեղեցիկ : Եւ այլ բազում վանորայք
 եւ եկեղեցիք կային , զորս ոչ կարացաք գրել
 եւ ոչ գնալ :

Եւ այլ յառաջ կայր եկեղեցի մի մեծ՝ Այա 165
 Սոփու նման , ի մեծ մօյտանն , զոր ունէր
 հաստ սըներ եւ երկայն : Եւ նետածիզ մի այլ
 առաջ զնացեալ տեսաք աղբեր մի շատրվան ,
 որ իբրեւ զգետ շրջնայր . եւ կային մերձ աղ-
 բիւրն երկու մատակ առիւծք , որ ի բերանոյ 170
 նոցա բխէր յորդ ջուր . եւ կոխած էր մին
 կողմն քարէն մեծ եւ մօրվաւոր զՄովսէս
 մարգարէն , եւ միւսէ՝ զԱհարոն : Եւ հանդէպ
 նմին եկեղեցի մի ազնիւ՝ Երուսաղէմայ սուրբ
 Յարութեանն նման , չէնքն , ձեւն եւ օրինակն . 175